

ժողովածու, որի մէջ նորա ջանկութեամբ պէտք է մանկին տարուայ բոլոր կիւրակէներէն և գլխաւոր տներէն համապատշաճ քարոզներ և որ Հայոց եկեղեցիներէն բաժանուելով իրրեօրինակ պէտք է ծառայէր քահանաների համար և նիւթ պէտք է տար յարմարաւոր քարոզներով մխիթարելու ժողովրդին: Ասկայն որովհետեւ մեր բողոքական զրադուներն արդիւք եղան մեզ մինչեւ այժմ այդ նպատակն իրադործելու: Իսկ նուիրատուի բողոքներն էլ ըստ կարելւոյն շուտ իրադործուած տեսնել՝ գիտեմ՝ ենք նորա ջանկութեան համեմատաբար այն քարոզիչ հայրերէն որոնք ունին պատրաստ կամ կարող են պատրաստել շուտով վերադառնալ նպատակին յարմար օրինակի քարոզներ՝ խնդրելով ուղարկել այն յանուն ձեռնարանի փորձութեան: Պ. նուիրատուն խոստանում է արտադրել 500 թ. նուիրի առանձին վարձատրութիւն տալ քարոզներէ հեղինակներէն որչափ կորուզէ ձեռնարանի Պատեմն: Խորհուրդը որ կ'ընեն ուղարկուած քարոզները և բնութիւններն ի յոյս կ'ընծայուեն փոքր տնտեսներով՝ ըստ նիւթի կամ ըստ հեղինակի մինչև որ կարելի կ'լինի նոյնից մի բնագործակ ժողովածու կազմել:

Կարապետ Վարդապետ.

ՏԱՃԿԼԱՅԻՐ.

— Ս. Հայրապետը յատուկ դրով մը յանձնարարած էր Ս. Պատրիարքին՝ արտօնել Մամիկոնեան Տ. Աբրահամ եպոսք եկեղեցական պաշտօն կատարելու: Ս. Պատրիարքը ի պատասխանին Ն. Ս. Օձնութեան այդ յանձնարարագրին՝ գրութեամբ մը մանրամասն տեղեկութիւններ հաղորդած է Արծն Ժողովոյ այս մասին ըրած կարգադրութեան և Տ. Աբրահամ եպոսքի վիճակին վրայ:

— Երազելիի Առաջնորդ Մուշեղ Ծ. Վ. է համար պաշտօնակից մը ստիկ առաջ լուր մը հրատարակած էր իբր թէ Մուշեղ Վ. Անն գտնուած միջոցին իրացուցած է տեղւոյն առաջնորդարանին պատկանող շատ հին մաղարութեայ թանկագին Մաշտոց մը: և Մուշեղ Վ. ըզգործած էր այդ զրպարտութեան և դայն յերկրող անձերուն դէմ: Պատրիարքարանէ յանձնարարուած էր տեղւոյն գաւառ. վարդապետն այս մասին քննութիւն մը կատարել և տեղեկացրել Պատրիարքարան: Աննայ կրօնական և քաղաքական ժողովները, Ազգ. Կեդր. վարչութեան այս յանձնարարութեան վրայ, մանրամասն քննութիւն մը կատարելով առաջնորդարանէ հին և նոր բոլոր զբեքու ցանկերը երևան հանած են թէ առաջնորդարանին մատենադարանին բոլոր զբեքը ամբողջ են և թէ առաջնորդարանին մէջ գոյութիւն ունեցած չէ այդ տեսակ մաղարութեայ հին պատկերազարդ Մաշտոց մը:

— Գրեցինք ստիկ առաջ թէ Մարգարանի վանքը գտնուող Իբրանտեան Գեորգ վարդապետ Դերջանի հովիւ կարգուած է: Յիշեալ վարդապետը այս օրերս նամակ մը գրելով Պատրիարքարան, Դերջան երթալու համար անհրաժեշտ ճամբու ծախքը կը խնդրէ միևնոյն ատեն պատրաստակաճութիւն յայտնելով Վան ալ երթալու, եթէ հարկ գատուի:

— Կարնոյ Տեղապահ Զաւէն Ծ. Վարդապետ Իւշ Բիւիսէի վանքին մէջ որբանոց մը հաստատելու համար Պայազիտ երթալով տեղւոյն Տեղապահ Մամբէ վարդապետի հետ կ'ընթացան հաստատութեանց կառուելու գումարներու մասին քննութիւն մը կատարել և հաշիւը ստիկի չափ կատարուած գումար մը երևան հանել է:

— Ծանօթ բարեւոյս ազգային մը այս անգամ Ալաջայեան Պոգոս էֆէնտիի ձեռք տասը օսմանեան լիւրս նուիրած է Գում Գաբուի չորս թաղերու Ազատականութիւն, որպէս զի այդ չորս թաղերու կարօտեալներուն ամուսն բաշխուի ձեռք օրերուն մէջ:

— Եղեօիոյ վանքը գտնուող Միթարեան Տ. Խորէն սրբազան հակառակ իր ծերունի և հիւանդոտ վիճակին, սկսել է նոյն վանքին մէջ գտնուող Ազգ. որբանոցի զարգացած ուսանողներուն շաքար չորս անգամ կրօնային բարոյազեղութեան դասեր աւանդել:

— Առևտրական և արհեստական գործերով Գահրէ հաստատուած Վանեցի ազգայիններ որբախնամ մարմին մը կազմած էին ստիկ առաջ: Այս անգամ, յիշեալ մարմինը իր կողմէ հաւաքուած 50 անգլ. ստիկն Վան զրկելով, յանձնարարել է 6 որբ ալ պահել Վարդապետ որբանոցին մէջ, իրենց ծախքով պահուած 8 որբերէն զատ:

— Պաթքնի հովիւ Մաշտոց վարդապետի նախագահութեամբ, ամբիկարանի Հայիր բարեգործական մարմին մը կազմել են, որ նպատակ ունի Վանայ վարժարաններուն մէջ երկրադործական դասընթացներ հաստատել տալ, աշա-

կերաներուն առնական և զործնական երկրագործութիւն և զիշխանաւորութիւն սովորեցնելու համար ամենէն նորագոյն մեթոտներով: Բիշեալ Մարմինը, ինքը պիտի հոգայ այդ մասին պէտք ըլլալիք կարող դաստառները, զործիքները և ուրիշ նիւթական պէտքերը:

— Երաբերից Որբանոցի օգտին առնակետով ընդմնադր տարի մը բոլորելու մաս ենք: Տարւոյ մայիսէն սկսեալ մինչև ջայտը երեսուն նոր որբեր աւելցան մեր աղդ, որբանոցին մէջ: Այդ որբերուն վերջին տասը պիտի հոգացուն Եգիպտոսի Որբատէրին՝ կողմէ ու անոնք որբանոց պիտի ընդունուն զեկա. 1ին: Նմանապէս որբանոցը այս տարի 70 սակի բացառիկ շահ մը պիտի ունենայ Հոլանտիա բուրձ արդիւնքէն: որ նուիրած է վիճակիս առաջնորդ Մուշեղ վարդապետի կողմէ:

— Ժողովրդական բարոյականի և կրթութեան զործը, հակառակ ծնողներու անտարբերութեան, որով զպոքները շարունակ ինչալու վիճակին մէջ կը դանուին, այս անգամ առաջնորդ Մուշեղ վարդապետի կողմէ ձեռք առնուեցաւ տարբեր ուղղութիւնով մը: Այս զործին յաջողութեան համար հաստատուեցաւ կիներուն յատուկ Ս. Գրոց և բարոյականի դաս մը, զոր Առաջնորդ Հայրը կառնող է եկեղեցիին մէջ ամէն երեքշաբթի օրեր: Նմանապէս երեսասորդներու կիրակնօրեայ վարժարանի մը բացումը կատարուեցաւ, ուր պիտի աւանդուն հայերէն զիւր և թուաքանութիւն, կրօնի ուսուցում և առողջաւանութեան ընթացք մը, զոր պիտի դասախօսէ Տոբթ. Խաթրով էֆ. Հէքիմեան որչափ ատեն քաղաքը մնայ: Եթէ ուսանողներու կողմէն պէտք եղած յարաւանութիւնը տեսնուի, աւանդուելիք դասերուն վրայ պիտի աւելցուն թուրքերէնը ու ֆրանսերէնը, նմանապէս աղայ մը զրկուեցաւ Դպրեվանը կրօնաւորութեան պատրաստուելու և երկու աղջիկներ Խաբերեզի միոննարական աղջկանց վարժարանը, ուսուցչուհիութեան համար: Ասոնց ծախքերը կը հոգացուն տեղական և այլ հանդանակութիւններով:

— Նպաստից Ծանձնաժողովը զուամբուեցաւ նախագահութեամբ Ս. Պատրիարքին: Ծանձնաժողովը իր այս նստին մէջ նախապատուութիւն տուաւ գաւառներէ հասած կարօտութեանց (գրեւոր, որոնք նպաստի անհրաժեշտ պէտքը կը զգացնէին) Ծանձնաժողովը նկատելով որ իր վրայ կը ծանրանան մասնաւորաբար որբանոցներու, գիւղական նպաստընկալ գոյրոցներու և մանաւանդ որբերու ապագային ապահովման հոգը, նշնակաւ նկատելով, որ այս տարի հունձքերը քիչ շատ յաջող եղած են, որոնց յանձնարարել առաջն տեղապահներուն, տեղա-

դական միջոցներով հոգալ իրենց աղքատները, ամենէն աւելի կարօտ գաւառներուն մէջմէկ զորք գումար զրկելու սկզբունքը ընդունելով:— Որբանոցներու շրջանը աւարտող և կամ չաւարտաւ որբերու ապագային ապահովման համար Ծանձնաժողովը որոշեց հանրային դիմութեան դիմել: Որբերը իրենց շրջանը աւարտելէ վերջ մէյմէկ զորք դրամադրուա պիտի ստանան, որբանոցին մէջ ստիպած արհեստներն ի զործ զնկելով իրենց ապրուստը ձարելու համար:

— ԲԲՈՎԱՏԻՆՍ (Ամերիկա) գանուող աղքայները Լօրէնսի Հովիւ Երսէն Վ. Վեհաւին հրաւիրեր են պատարագելու համար: Այդ տարի 150 տղարի չափ զուամար մը հաւաքուեր է ի նպաստ որբերու, և յանձնուեր է Հայոհհեաց Որբանոցամ Մարմնոյն:

— ՅՈՒՆԱՅ Պատր. Փոխանորդ Տ. Քոնրութեան Պգիկոյ վերջին անգամ Երաէկ գացած ըլլալով, անկէ Եգիէն անցեր է, ուր տեղւոյն եկեղեցւոյ Մկարոյ քահանան ընկերակցութեամբ Թաղ. Խորհրդոյ անգամներու բարի զաւտեան այցելութիւն տուեր է իրեն և պատուով ընդունուեր է: Հետեւեալ օրը Տ. Քոնրութեան թիւ տեղւոյն Ս. Գէորգ եկեղեցին այցելեր է և Թաղ. Խորհրդոյ անգամներու և տեղացիներու բաղմաւթեան մը կողմէ ընդունուելով գպիւրներու երգեցողութեամբ եկեղեցի առաջնորդուեր է: Տ. Քոնրութեան թիւ աղօթելէ յետոյ ըմ Եկեր և 10 վայրկեանի չափ քարոյ մը խօսեր է, յիշելով և իրաւաքելով մասնաւորապէս երկու Քոյր եկեղեցիներու միջև տիրող սիրալիր յարաբերութեանց աւանդանութիւնը: Ապա Տ. Քոնրութեան թիւ առաջնորդարան տարուելով մեծարանքներ եղեր են իրեն:

— ՊՕԼԻՍ բնակող Բ. Ա. էֆ. Մարաշեան Մալաթիոյ որբանոցին մէջ իր ծախքով յոր մը պահուելուն իրաւաք յայտնելով, 6 սակի զուամար մը զրկեր է, խոտաւալով տարուէ տարի զրկել որդեգրելոյն համար պէտք եղած ծախքը: Մալաթիոյ մէջ բացի այս որբանոցէն կրթական զարգացման գովելի հետամտութիւն մը կայ: Նորընտիր տեղապահ Խաչատուր Վ. կաշխատի Ս. Երզրգուի թիւն և Ս. Եարութիւն թաղերու կեդրոնը աղջկանց վարժարան մը բանալ աղգայիններու նպաստով: Վերախօսեալ ընթերցարանի մը բացման ալ ձեռնարկուած է:

— ԱԶԳ. ՀԻԻԱՆԳԱՆՈՅԻ հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ կը ծանուցանէ թէ Եէնի-Պարուի ընտիկներէն, հանդուցեալ Վաղարոս էֆ. Մ. Համամեան իր կենդանութեանը Բերայի կալուածոց հոգաբարձութեան ըով աւանդ թողած հարիւր յետուն Օսմ. սակէն 80 սակէն հիւանդանոցին յատկացուցած ըլլալով:

հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ կը ծանուցանէ թէ՛ հանդուցելոյն մայրը տիկին Էֆթիկ Մ. Համամճեան իր որդւոյն վերջին կամբը յարգելով կալուածոց հոգաբարձութենէն ամբողջապէս ստացած է յիշուի 80 Օսմ. սոկին և յատկացուցած է ի պէտս Աղդ. Հիւանդանոցի:

— ԿԱՐԻՆԻ տեղապահ Զաւէն Ծ. Վ. անցեալները Պայազեօի կողմերը գնաց, մասնաւորապէս որբանոցի մը բացման խնդրոյն համար: Այդ կողմերը ձմեռը սկսած է արդէն և սոր ու ձոր ձիւնով ծածկուած են. այս հանգամանքներուն մէջ աղքատ և անօր տղայոց պատտաբարձութեան խնդիրը բաւական կարեւորութեամբ մէջտեղ կելլէ, որուն դարման մը խորհած էր Նպատակց Յանձնաժողովը, գործադրութիւնը յանձնելով Զաւէն Վ. ի: Յիշեալ տեղապահը՝ Ալաշկերտէն, Թօրթազալէէն, Գաւաքիլիսէէն անցեր և անգացիներու կողմէ սլատուով ընդունուել է, բայց որովհետեւ իր բուն Նպատակը որբանոցի մը հաստատութիւնն էր, կերեւայ որ Երկար առէն մնալու ժամանակ չէ ունեցեր: Այս մէկ քանի տեղերը որբանոցի բացման անյարմար ըլլալով, վերջապէս կորոշուի Պայազեօի մէջ բանալ Նոյն որբանոցը, և Հոգաբարձութիւն մը կընտրուի Նախագահութեամբ Քաջբերունի Ներսէս քհն ի: Զաւէն Վ. Իւշ Բիլիսէի վանքին հաշիւներն ալ նայելով, այս տարուան ցորենի հատոյթէն 100 քիլէ ցորեն աւելի կը դանէ և Նոյն որբանոցը կը զրկէ: Այս կարգադրութիւնները ըլլալէ յետոյ, որբերուն, որոնք թուով 21 են, որբանոցի նորընտիր հոգաբարձութեան կողմէ Աղդ. վարժարանին մէջ թէյ արուելէ յետոյ անգացիները մէկ երկու ուր աւանելով տուներին տարեր են, մինչև որ տեսնուին որբանոցին նախնական պատրաստութիւնները: Նոյն շաբթուն կերակի օրը Պայազեօի եկեղեցիին մէջ հոգեհանգիստ կատարուել է հանդուցեալ Զանշեանցի հոգւոյն համար: Եկեղեցին բազմութեամբ լեցուել է և Ներսէս քհն. Քաջբերունի Պատարագ մատուցել է: Սեղանին առջև դադաղ մը գրուել է սե քողով ծածկուած, որուն վրայ երկու պոսակ գրուել են: Որբերը շարուել են դադաղին քով, սե ժապարէններով զարդարուած մամեր ի ձեռին: Պատարագիչ Ներսէս քհն. ինչպէս նաև որբանոցին անօրն Սեդրաք էֆ. դամբանականներ արտասանելով ի վեր հանել են Զանշեանցի մարդասիրական զգացումները: «Այս կերպով Զաւէն Վ. կարգադրել է որբանոցին բացման խնդիրը. բայց թէ ի՞նչ կարգադրութիւն եղեր է Պայազեօի վեճակային անսպառ գործերուն համար, յայտնի չէ տակաւին, արդիւնքին կը սպասենք: Միայն այս անգեկութիւնները մեզ հաղորդողները կրան թէ Զաւէն Վ. Բառն և այլ կարգ մը գիւղեր այ-

ցելելով քարոզ խօսեր և մէկ մէկ վարժարան բացեր է այդ կողմերը. յանձնարարելով որ անգացի աղգայինները իրենց միջոցներով կառավարեն դանոնքս:



ՄԱՐԾ ՄԻԻԼԵՐ և ՆՈՐԱ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԸ *

Եօթնամսուն և եօթ տարեկան հասակում մեռաւ և զարուս նշանաւորագոյն գիտնականներից մէկը: Սկիզբի տարեկան համալսարանի համաժողովական լեզուաբանութեան ուսուցչակիւ Մաքս Միլլեր: Նորա կեանքը հետաքրքրական պիտի լինի «Արարատ -ի ընթերցողներին համար այն պատճառով, որ իւր աշխատանքի մեծագոյն մասը արեւելեան կրօնների և մասամբ քրիստոնէութեան ուսումնասիրութեան է նուիրել: Հետեւալ տողերը աւելի կպարզեն մեր խօսքը: Մաքս Միլլեր ծնուել է 1823 թուին Գեռայում ուր նորա հայրը դոքսի զբաղարանակալն էր: Շատ վաղ զրկուելով իւր ծնողներից՝ Մ. Միլլեր սնուեցաւ և մեծացաւ Լայպցիգում իւր ազգականի ուսուցչակիւ Կարլուսի տանը: Յետոյ մտաւ Լայպցիգի համալսարանը դասական լեզուաբանութեան և փիլիսոփայութեան բաժինը և ուսումնասիրութեան նիւթ զարձրեց արարական և սանսկրիտ լեզուները՝ յայտնի հնդկարան ուսուցչակիւ Բրոկհաուզի առաջնորդութեամբ: Այսած 1844 թուից արդէն Մաքս Միլլեր իւր վերայ զարձրեց ամենի ուշադրութիւնը սանսկրիտ դասական հնդկականների թարգմանութեամբ: Իւր կրթութիւնը կատարելագործելու նպատակով անցաւ Բերլին, Փարիզ, ապա գնաց Լոնդոն, ուր գերմանական հիւպատոսի հովանաւորութեան շնորհիւ՝ Արեւելեան-Հնդկաստանի ընկերութիւնից հրաւերւաւ բացաւ թարգմանել Վիդ վեդան, հնդկական ամենահին գրական յիշատակարանը, որի վերոյ 26 տարի է աշխատել, ապա հրատարակեց հին սանսկրիտ

* Բաղաժօրեմ քաղցմանում է Неделя за-памятиррից և Allg. Zeit. Beilage-ից: